

Կոստանդին երկարամեայ թագաւորն այն թաքուն. քան զոր հաւանագոյն դատի յառաջնոյն աւանդեալն՝ թոռն Կոստանդինի (Կարապետն): Թէպէտեւ չիցէ անհաւան՝ եթէ յետ գերութեան Ե Լեւոնի՝ Կոստանդին ոմն համարեալ իցէ յանձնէ կամ յայլոց եւս՝ ժառանգ կամ թեկնածու թագին Հայոց՝՝ ԻԿիլիկիա, որպէս Լիւզինեանքն՝ ԻԿիպրոս, եւ յետոյ խաբեքայք յովկամ յովկետ:

Ի ճահ վարկանիմ աստանօր կարգել զչար թագաւորաց Սիսուանայ՝ յաջորդաց Լեւոնի, յորոց թիւ՝ ոչ միաբանին ժամանակագիրք եւ գաւազանք, ոմանց խտրելով եւ ոմանց ոչ՝ զթագապահսն եւ զթագաւորս: Մթին է տակաւին եւ ժամանակն եւ պատճառք եւ եղանակ թագաւորութեան յաջորդաց Լեւոնի Դ, որպէս եւ մահուան կամ սպանման նոցին: Արդ որ ինչ ծանօթ է մեզ եւ կարելոր՝ իգիտութիւն, հանդերձ ազգաւ եւ խնամութեամբ նոցին, այս է, իւրաքանչիւր թուականօք:

1221. Ֆիլիպ Անտիոքացի, ընդ Զապելի պսակեալ. † 1225:

1226. Հեթում Ա, որդի Կոստանդինի Պայլի, պսակեալ ընդ Զապելի. † 1270, հոկտ. 28:

1271. Լեւոն Բ, որդի Հեթոմյ, որոյ կին՝ Կիո՝ Աննա (Կեռան) դուստր է Հեթոմյ Լամբրունեցոյ. † 1289, փետր. 6:

1289. Հեթում Բ, որդի Լեւոնի Բ, անթագ միապետէ. † 1307, նոյեմբ. 17:

---

սա Ե Լեւոնն է, եւ երկոտասաներորդ թագաւորն Սսայ: Յեւթն ամիսն սորա ՚ի ՊԻԳ (1374-5)...

թագաւորին Լեւոնի ՚ի Սիս. եւ էառ զքաղաքն եւ այրեաց. եւ գերեաց զԼեւոն թագաւորն թագուհեան եւ որդօքն իւրովք յԵգիպտոս. եւ արբեցաւ նետն յարենէ, եւ սուրն կերաւ միս յարենէ վիրաւորելոց գերելոց զիւոց իշխանաց նոցա», եւ այլն: Եւ յետ սակաւ տողից յարէ. «Եւ դարձեալ թագաւորէ ՚ի Սիս՝ Կոստանդին»!

Եւ յամի 1423 անցեալ ՚ի Կիպրոս, որպէս նշանակեցաք ՚ի վեր անդր:– Յայս ամենայն խառնակ բանից՝ նշանելի է, նախ, այլ եւ այլ աւանդութիւն զվերջին թագաւորաց, որովք վարի ժամանակագիրն, առանց ընտրութեան. երկրորդ լռութիւն զԼիւզինեան տոհմէ, կամ զպայազատաց իգական շառաւեղի Հեթմեանց. եւ երրորդ, զի եւ յետ գերութեան Լեւոնի՝ թուի՝ եթէ ոչ թագաւոր՝ այլ ազգապետ ոմն ՚ի Հայոց կացեալ ՚ի Սիս, մինչեւ ցգաղթ բազմութեան Սսեցոց ՚ի Կիպրոս կամ այլուր:

\* ԶԿիտ եւ զԿոստանդին շփոթեալ է նախ շարայարողն տարեգրութեանց Սամուելի, զի ասէ. «Կիտն Կոստանդին որդի Պարոն Բաղդինին, հօրքեռորդի Լեւոնի: Սա էր որդի Պարոն Հեթմոյ, թոռն Դ Լեւոնի»: Քառեակ շփոթք են ՚ի բանիդ. Կիտ՝ արդարեւ Դ Լեւոնի հօրքեռն (Զապլունի) որդի է. իսկ որդին Պարոն Բաղդինի՝ է Կոստանդին Բ. որդին Պր. Հեթմոյ՝ է Կոստանդին Գ: Իսկ թոռն չիք ոչ Դ եւ ոչ Գ Լեւոնի. այլ Կիտ՝ է արդարեւ թոռն Բ Լեւոնի, որդի գովով դստեր նորին Զապլունի, որպէս բազում անգամ նշանակեցաւ:

Մէլիք Զերքեթ

Զամանէ ասէ թ